ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԿՈՆԴԱԿԸ՝ ԵՐՈՒՍԱՂԵՄԻ ՀԱՅՈՑ ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀ ԱՄԵՆԱՊԱՏԻՎ Տ. ԵՂԻՇԵ ՍՐԲԱԶԱՆԻՆ ԱՐՔՈՒԹՅՈՒՆ ՇՆՈՐՀԵԼՈՒ ՄԱՍԻՆ

ԳԵՈՐԳ ԾԱՌԱՑ ՑԻՍՈՒՍԻ ԳՐԻՍՏՈՍԻ, ՈՂՈՐՄՈՒԹԵԱՄԲ ՏԵՎԱՆ ԵՒ ԿԱՄՈՒՆ ԱԶԳԻՍ ԵՊԻՍԿՈՊՈՍԱՊԵՏ ԵՒ ՆԱԽԳԼԽԱՎՈՐ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ, ԾԱՅՐԱԳՈՅՆ ՊԱՏՐԻԱՐՔ ՀԱՄԱԶԳԱԿԱՆ ՆԱԽԱՄԵԾԱՐ ԱԹՈՌՈՑ ԱՅՐԱՐԱՏԵԱՆ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑՒՈՅ ՍՐՔՈՅ ԿԱԹՈՂԻԿԻ ԷՋՄԻԱԾՆԻ

ԱՄԵՆԱՊԱՏԻՒ Տ. ԵՂԻՇԷ ՍՐԲԱԶԱՆԻՆ, ՊԱՏՐԻԱՐՔԱԿԱՆ ՏԵՂԱՊԱՀԻՆ ՍՐԲՈՅՆ ՍԱՂԻՄԱՅ, ՀԱՐԱԶԱՏԻ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՅ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ ԵՒ ՀՈԳԵՒՈՐ ՍԻՐԵԼԻ ԶԱՒԱԿԻ ՄԵՐՈՒՄ, ՈՂՋՈՅՆ ԵՒ ՕՐՀՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ

Հոգով ուրախ եմ, որ առիթ ներկայացավ անձամբ տեսնելու Ձեզ և ճանաչելու Ձեր հոգու բարոյական և մտավոր կարողությունները, Ձեր խորարափանց միտքը, Ձեր զգայուն սիրտը, Ձեր հայրենասիրությունը, Ձեր ժողովրդասիրությունը, Ձեր զորավոր վերաբերմունքը նանդեպ Ս. Էջմիածնի և Սովետական նորածին Հայրենիքի, Ձեր ոգևորությունն ու ճիգացումը Հայրենիքի վերելքով և Ձեր հաստատուն կամքը, որ գրավական է մեզ համար, թե Ձեր վսեմ և ազնիվ զգացմունքները ու գաղափարները տևական պիտի լինեն և հաստատուն և ոչ՝ անապատի եղեգի նման՝ քամու հուսանքով շարժուն:

Ձեր այս առաքինությունները և Ձեր դիրքն ու կոչումը թելադրում են Մեզ՝ այս Հայրապետական կոնդակով շնորհել Ձեզ արքության պատիվ՝ ի բարի վայելումն:

Մաղթում ենք Փրկչին, որ՝ Իր քառոգած և սիրած վայրերը, Իր վեհ ապրումների ճիշտատակարանը և այնտեղ ապրող Իր սիրած ժողովրդի սերունդը՝ Իր հովանու տակ անսասան պահե:

Հայցում ենք Ամենակալին, որ հայ հավատացյալ ժողովրդի և համայն քրիստոնեության Սրբություն-Սրբոցը՝ Ս. Երուսաղեմն իր վանքերով և հավատացյալ ժողովրդով հավետ պահպանե:

Աղոթում ենք Բարձրյալին, որ Զեզ արժանացնե Ս. Երուսաղեմի պատրիարքական Աթոռի արժանավոր Գահակալը դառնալու և արևշատություն ու կամքի կորով պարգևե՝ Զեր լուսավոր գաղափարները ու Զեր սուրբ ուխտը ի կատար ածելու և Զեր սրտի խորքում արմատ ձգած սիրո կապը՝ Ս. Էջմիածնի և Հայ Հայրենիքի հետ՝ անբաժան ու անխաթար պահե:

ԿԻՐԻԼԼՈՍ ԵՎ. ԹԱՔՈՒԱԳՈՒՑՆ, ՊԱՏՐԻԱՐՔ
ԱՄԵՆԱՑՆ ՀԱՅՈՑ

Տրված կոնդակս ի 18-ն յուլիսի 1951
Փրկչական ամի և ի Տումարիս Ռն.
յԵրանելոյդ ամի Հայրապետութեան մերոյ.
ի Ս. ԷՋՄԻԱԾԻՆ